

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 53/11

Քաղ.Երեւան

23 նոյեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Ա. Բաբայան, Ա. Հ. Աբգարյան Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. նոյեմբերի 23-ի նիստում (արձանագրություն N 7.7) քննարկեց «Ոսկեվազի գինու գործարան» ընկերության կողմից 2011թ. հոկտեմբերի 19-ին ներկայացված «ՎԱՆԱԿԱՆ» (հայտի համարը՝ N 20110020) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90-րդ կետի 6-րդ ենթակետը, համաձայն որոնց գրանցման ենթակա չէ այն նիշը, որը հակասում է հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին, ինչպես նաև անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին: Արժեք հասկացությամբ նշվում է այն հանգամանքը, որ մարդկային գործունեության մեջ ներգրավված իրականությունը ձեռք է բերում մի նոր հատկանիշ, այն իմաստավորվում է հասարակական-մշակութային և հոգևոր ենթատեքստում և դառնում որոշակի գնահատականների առարկա: Մերժման հիմքում նշված է, որ «ՎԱՆԱԿԱՆ» բառը չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան, քանի որ այն հակասում է հայ ժողովրդի ազգային և հոգևոր արժեքներին և հարիր չէ այն զետեղել խմիչքների պիտակի վրա:

Բողոքարկողը խնդրել է, հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, վերանայել ապրանքային նշանների բաժնի փորձաքննությունների որոշումը և գրանցել հայտարկվող «ՎԱՆԱԿԱՆ» ապրանքային նշանը հայտարկվող բոլոր ապրանքների համար:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2011թ. հոկտեմբերի 19-ին «Ոսկեվազի գինու գործարան» ընկերության կողմից բողոք է ներկայացվել «ՎԱՆԱԿԱՆ» (հայտի համարը՝ N20110020) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման վերաբերյալ: Համառոտ նշվեց բողոքի բովանդակությունը:

Բողոքարկման խորհուրդը որոշեց, որ կարելի է գրանցել «ՎԱՆԱԿԱՆ» ապրանքային նշանը 33-րդ դասի (գինի և կոնյակ) ապրանքների համար:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-րդ ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Ոսկեվազի գինու գործարան» ընկերության բողոքը մասնակիորեն և չեղյալ ճանաչել հայտարկված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության մասին որոշումը մասնակիորեն՝ գրանցելով ՎԱՆԱԿԱՆ» (հայտի համարը՝ N 20110020) բառային ապրանքային նշանը 33-րդ դասի (գինի և հայկական կոնյակ) ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի

նախագահ

Ա. Ազիզյան